ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-5-10

Թիվ 19/193
«06» XII 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2019թվականի նոյեմբերի 27-ին կայացած թիվ 11 նիստի որոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 15.11.2019թ. թիվ 17/27.3/26321-19 պաշտոնական գրությունը՝ Արմավիր համայնքի ավագանու Նորմատիվ իրավական ակտերի որոշումների նախագծերի վերաբերյալ պետական փորձագիտական եզրակացությունը:

Առդիր «22» թերթից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-51

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2019 թվականի N 41-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 - րդ հոդվածի 6-րդ մասով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2019թվականի նոյեմբերի 27-ի թիվ 12 նիստի օրակարգը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ռ. Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ե.Ասմարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ս.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Գ. Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2019 թվականի նոյեմբերի 27
Արմավիր համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արմավիր
Համայնքի ավագանու 2019թ. նոյեմբերի 27-ի
N 41-Ա որոշման

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 37-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./
Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

8.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԻ 10%-Ի ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

9. ՍՈՑ.ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ՝ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ.Մարգարյան /համ.ղեկ./

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2019թ. N 42-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետությանօրենքի 33-րդ հոդվածով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով և 33-րդ հոդվածի 3-րդ մասով:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2018թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2019թվականի բյուջեի հաստատման մասին » N 38-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

Եկամտային մասից՝

Մրցույթներին և աճուրդներին մասնակցության գումարը ավելացնել 30,0հազ.դրամով:

Օրենքներով և իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքգրման ենթակա այլ եկամուտներ ավելացնել 70,0հազ.դրամով: Գույքահարկը՝ շենք շինությունների համար կրճատել 600,0հազ.դրամով: Հողի հարկը կրճատել 1740,0հազ.դրամով:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 1000,0հազ.դրամ հատկացնել ֆոնդային բյուջե:

ծախսային մասում՝

11 12-ից

4891- հոդվածը կրճատել 4690,0հազ.դրամով

111-ից

4111- հոդվածը կրճատել 2171,0հազ.դրամով
4234- հոդվածը ավելացնել 15,0հազ.դրամով
4261- հոդվածը ավելացնել 100,0 հազ.դրամով
4269-հոդվածը կրճատել 8,0հազ.դրամով

631-ից

5112-հոդվածը ավելացնել 600,0հազ.դրամով.
5113-հոդվածը ավելացնել 200,0հազ.դրամով.
4241-հոդվածը ավելացնել 420,0հազ.դրամով
4212-հոդվածը կրճատել 800,0 հազ.դրամով
4251-հոդվածը կրճատել 280,0հազ.դրամով
4657-հոդվածը ավելացնել 2664,0հազ.դրամով

161-ից

5113-հոդվածը ավելացնել 200,0հազ.դրամով
4637- հոդվածը կրճատել 200,0 հազ.դրամով
4269- հոդվածը ավելացնել 600,0 հազ դրամով.
4266 -հոդվածը կրճատել 80,0 հազ.դրամով
4823-հոդվածը ավելացնել 80,0հազ.դրամով
4241-հոդվածը ավելացնել 120,0հազ.դրամով
4239-հոդվածը ավելացնել 110,0հազ.դրամով
4251-հոդվածը կրճատել 500,0հազ.դրամով

824-ից

4269- հոդվածը ավելացնել 300,0 հազ դրամով.
4261-հոդվածը կրճատել 250,0հազ.դրամով
4267-հոդվածը ավելացնել 250,0հազ.դրամով

911-ից
4511-հոդվածը ավելացնել 390,0 հազ.դրամով

951-ից
4511-հոդվածը ավելացնել 200,0հազ.դրամով

1071-ից
4729-հոդվածը ավելացնել 500,0հազ.դրամով

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը;

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ Դեմ Ձեռնպահ

Թ.Պողոսյան---------- (ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ի.Ազիզյան---------- (ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ռ.Ազիզյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ե. Ասմարյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ա.Սարգսյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Ս.Ստեփանյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Գ.Նազարյան ----------(ստորագրություն) ----------(ստորագրություն)----------

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Սարգարյան

Արմավիր համայնք

2019 թվականի նոյեմբերի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27» նոյեմբերի 2019 թվականի N 43 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 37-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2019թվականի հոկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2018թվականի դեկտեմբերի 11-ի N38-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 37 որոշումը:

2. .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը;

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ռ.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ե. Ասմարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ս.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Գ. Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2019 թվականի նոյեմբերի 27
Արմավիր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2019 թվականի N 44-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով .

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի վարչական տարածքում 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա վ ա գ ա ն ու ա ն դ ա մ ն ե ր

Դեմ	Կողմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ռ.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Ասմարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Գ.Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ս.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2019թվականի նոյեմբերի 27
գ.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ՝
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արմավիր համայնքի
ավագանու 2019թ. նոյեմբերի 27-ի
N 44- Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան՝նոր շենքերի,շինությունների (ներառյալ ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական շենք շինությունների համար՝

ա/ մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենք շինությունների համար՝յոթ հազար 500դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝տասհինգ հազար դրամ.

բբ/ 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝ քսանհինգ հինգ հազար դրամ.

բգ/ 1000-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝քսանհինգ հազար դրամ.

բդ/ 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքեր և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերեկանգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվոոություն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախածով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,բացի սույ ն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար՝ սույն Հավելվածի առաջին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով՝.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար՝ սույն Հավելվածի առաջին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:

4.Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

5.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների

տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.
6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.
7. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա.մինչև 26քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ.
բ.. 26-ից մինչև 50քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.
գ.. 50-ից մինչև 100քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ.
դ.100-ից մինչև 200քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ.
ե.200-ից մինչև 500 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.
զ. 500-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան երկու հազար հինգ հարյուր դրամ.

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ.
բ.. 26-ից մինչև 50քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ.
գ.. 50-ից մինչև 100քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ.
դ.100-ից մինչև 200քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ.
ե.200-ից մինչև 500 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.
զ. 500-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.

8. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

՝ ա.մինչև 26քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հազար դրամ.
բ.. 26-ից մինչև 50քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
գ.. 50-ից մինչև 100քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.
դ.100-ից մինչև 200քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.
ե.200-ից մինչև 500 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ.
զ. 500-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնը հինգ հազար դրամ.

Ոչ հիմնական շինությունների ներսում՝

՝ ա.մինչև 26քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հարյուր դրամ.
բ.. 26-ից մինչև 50քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հարյուր դրամ.

գ.. 50-ից մինչև 100քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հազար դրամ.
դ.100-ից մինչև 200քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ.
ե.200-ից մինչև 500 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ.
զ. 500-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.
բ/ Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.
9. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:
10. Համայնքի տարածքում՝առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24ᵒᵒ -ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.
գ/ բաղնիքների(սաունաների) համար՝երկու հարյուր հազար դրամ.
դ/ խաղատների կազմակերպման համար՝հինգ հարյուր հազար դրամ.
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝մեկ հարյուր հազար դրամ.
11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ զրո դրամ:
12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:
13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
14. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
15. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ:
16. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի
վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
3) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
4) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնք 1 փողոց 19 շենք 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2019 թվականի N 45-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի առաջին մասի 19 կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի կողմից 2020 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի.
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ռ. Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ե.Ասմարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Գ.Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ա.Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ս.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	

Համայնքի ղեկավար՝ **Ռ.Ֆ.Մարգարյան**

2019թվականի նոյեմբերի 27
գ.Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արմավիր համայնքի
ավագանու 2019թվականի նոյեմբերի 27-ի
N 45-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող,ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

2.Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց՝մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝
1/.Համայնքային ենթակայության արվեստի դպրոց և մանկապարտեզ հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել ամսական երեք հազար դրամ.
2/համայնքի բնակչության առանձին խմբերի համար վճարներ սահմանել հետևյալ չափով՝
ա/մեկ ընտանիքից երկու և ավել երեխաների համար՝25 տոկոսի չափով՝երկու հազար երկու հարյուր հիսուն դրամ.
բ/միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝50 տոկոսի չափով՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.
գ/երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 75 տոկոսի չափով՝յոթ հարյուր հիսուն դրամ.
դ/զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների,ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝100 տոկոսի չափով:
3/ Արմավիրի արվեստի դպրոց ՀՈԱԿ-ում այլ համայնքներից հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել՝ վեց հազար դրամ:
3. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ վճար սահմանել՝ հինգ հազար ՀՀդրամ:
4.Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար՝
1/ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ հիսուն դրամ,
2/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար ՀՀդրամ,
3/հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներից՝ ըստ շենքերի և շինությունների մակերեսի՝ մեկ քառակուսի մետրի համար՝ տասը դրամ:
5. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրափակիչ աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2019 թվականի N 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Որոշել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի 2020թվականի վարձատրության չափը՝ 310.000ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ /7/	Դեմ /0/	Չեռնպահ /0/
Թ.Պողոսյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ի.Ազիզյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ռ. Ազիզյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ե.Ասմարյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ա.Սարգսյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ս.Ստեփանյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Գ.Նազարյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2019 թվականի նոյեմբերի 27
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2019 թվականի N 47-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով.և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի 2020 թվականի համայնքապետարանի աշխատակազմի, ենթակայության բյուջետային հիմնարկի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ	Դեմ	Չեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ռ. Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ե.Ասմարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ս.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)
Գ.Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2019 թվականի նոյեմբերի 27
գ.Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արմավիր համայնքի
Ավագանու 2019թվականի նոյեմբերի 27-ի
N 47-Ա որոշման

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 11,5
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքը
1.	Համայնքի ղեկավար	1	310000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	220000
	Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Զ Մ		
3.	Աշխատակազմի քարտուղար	1	228000
4.	Առաջատար մասնագետ	3	220000
5.	1-ին կարգի մասնագետ	2	180000
6.	2-րդ կարգի մասնագետ	1	160000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
7.	Գործավար	1	150000
8.	Անասնաբույժ	0,5	91276
9.	Հավաքարար	1	88312

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքը
1.	Գեղմասվար	1	88312
2.	Գրադարանի վարիչ	1	88312
3.	Մարզիչ	1	92000
4.	Պարուսույց	1	91276
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	ԱՆՁՆԱԿԱԶՄ	
5.	Պահակ	1	88312
6.	Հավաքարար	1	91276

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 17,5
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքը
1.	Տնօրեն	1	120000
2.	քանոնի ուսուցիչ	1	121848
3.	շվիի ուսուցիչ	1	121848
4.	դաշնամուրի ուսուցիչ	1	88312
5.	դաշնամուրի ուսուցիչ	1	91276
6.	դաշնամուրի ուսուցիչ	1	91276
7.	դաշնամուրի ուսուցիչ	1	91276
8.	դաշնամուրի ուսուչիչ	1	91276
9.	վոկալի ուսուցիչ	1	91276
10.	սոլֆեջիոյի ուսուցիչ	1	88312
11.	դհոլի ուսուցիչ	1	91276
12.	կերպարվեստի ուսուցիչ	1	91276
13.	Դուդուկի ուսուցիչ	1	121848
14.	Կոնցերտմեստր	1	91276
15.	հաշվապահ	1	100000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	ԱՆՁՆԱԿԱԶՄ	
16.	քարտուղարուհի-գործավար	0.5	91276
17.	հավաքարար	1	88312
18.	պահակ	1	88312

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
,,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 12,2
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքը
1.	Մանկապարտեզի տնօրեն	1	120000
2.	դաստիարակ	2.5	102000
3.	դաշնակահար	0.5	102000
4.	բուժքույր	0.5	91276
5.	հաշվապահ	0.5	91276
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	ԱՆՁՆԱԿԱԶՄ	
6.	դայակ	1.1	91276
7.	դայակ	1.1	88312
8.	խոհարար	1	88312
9.	խոհարարի օգնական	0.5	88312

10	տնտեսվար	0.5	91276
11.	գործավար	0.5	91276
12.	օժանդակ բանվոր	0.5	88312
13.	այգեպան	1	88312
14.	պահակ	1	88312

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-51

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2019 թվականի N 48-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԻ 10%-Ի ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հյաստանի Հանրապետության «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ներտնտեսային ցանցի «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում» շինարարական աշխատանքների արժեքի 10%-ի համաֆինանսավորմանը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ի.Ազիզյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ռ. Ազիզյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ե.Ասմարյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ա.Սարգսյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ս.Ստեփանյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Գ.Նազարյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2019 թվականի նոյեմբերի 27
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-51

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2019 թվականի N 49-Ա

ՍՈՑ.ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ՝ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Արմավիր համայնքի 5 սոց. անապահով ընտանիքներին հատկացնել 260,000/ երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի օգնություն՝ չորս սոց.անապահով ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 50,0/հիսուն հազար/-ական ՀՀդրամ և մեկ սոց. անապահով ընտանիքին՝ 60/վաթսուն հազար/ ՀՀ դրամի օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ռ.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ե.Ասմարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Մ.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ա. Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Գ. Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2019թվականի նոյեմբերի 27

Արմավիր համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արմավիր գյուղական
Համայնքի ավագանու 2019 նոյեմբերի 27
N 48-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

1. Հովհաննիսյան Ալիկ 50000հազ.դր.
2. Գրիգորյան Մարջիկ 50000հազ.դր.
3. Իսկանդարյան Միքայել 500000հազ.դր.
4. Սրեյան Սեյրան 50000հազ.դր.
5. Պողոսյան Գևորգ 60000հազ.դր.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

17/27.3/26321-19
15 11 19

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ՝ press@moj.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 19/183 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի կողմից 2020 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
հեռ. 594116

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի կողմից 2020 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու **«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»** որոշման նախագծի 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ նշել փոփոխվող նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու **«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին»** որոշման նախագծի Հավելվածի՝

1/ կետերի համարակալումը վերանայման կարիք ունի, մասնավորապես՝ 7-րդ կետին հաջորդում է 5-րդ կետը.

2/ 2-րդ կետի բ/ և գ/ ենթակետերում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «սույն Հավելվածի 1-ին կետով» բառերով.

3/ 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ համապատասխանեցնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ

հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջներին, մասնավորապես՝ «51», «101», «201» և «501» թվերը համապատասխանաբար փոխարինել «50», «100», «200» և «500»թվերով.

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու **«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի կողմից 2020 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին»** որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալություն